Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-34.5-Ղ4-10 Բաժնի պետ(2023-12-25)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Տնտեսական վարչություն | Սպառազինության ապահովման բաժին | Բաժնի պետ, (27-34.5-Ղ4-10)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին**:**

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. ապահովում է Նախարարությանը ենթակա պետական մարմիններին զենք-զինամթերքով, հատուկ միջոցներով և սպառազինության միջոցներով.
2. ապահովում է Նախարարությանը ենթակա պետական մարմիններին հատկացվող անհրաժեշտ հատուկ միջոցների, զենք-զինամթերքի և սպառազինության միջոցների հաշվառման և նորոգման աշխատանքների կազմակերպումը.
3. ապահովում է տվյալների, տեղեկությունների հավաքումը և ցանկերի կազմումը՝ օգտագործման համար ոչ պիտանի զենքի, զինամթերքի և այլ գույքի դուրսգրման վերաբերյալ.

4. ապահովում է ուսումնասիրությունների միջոցով վերահսկողության իրականացման, ինչպես նաև մեթոդական օգնության ցուցաբերման աշխատանքների իրականացումը՝ Նախարարությանը ենթակա պետական մարմիններին ամրակցված զենքի, զինամթերքի պահպանման և հաշվառման ուղղությամբ.
5. ապահովում է սահմանված կարգով ոչ պիտանի զենք-զինամթերքի ոչնչացման աշխատանքների կազմակերպումը.
6. ապահովում է զենք-զինամթերքի կոմիսիոն վաճառքի կազմակերպումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իրավունքները.

- պահանջել և ստանալ զորահավաքային առաջադրանք ունեցող ստորաբաժանումների՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի պաշարների կուտակմանն ու բաշխմանն ուղղված գործունեության վերաբերյալ հաշվետվություններ.
- պահանջել և ստանալ զենք-զինամթերքի հանձնման-ընդունման, պահեստավորման, բաշխման և տեղափոխման աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ ու տեղեկատվություններ.
- պահանջել և ստանալ սպառազինության և ռազմական տեխնիկայի, նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտագործման նկատմամբ իրականացվող աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ ու տեղեկատվություններ.
- Նախարարությանը ենթակա պետական մարմիններին զենք-զինամթերքով, հատուկ միջոցներով և սպառազինության միջոցներով ապահովելու նպատակով կազմակերպել քննարկումներ՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով այլ պետական մարմինների ներկայացուցիչներին.
- զենք-զինամթերքի կոմիսիոն վաճառքի կազմակերպման գործառույթի շրջանակներում գնորդից պահանջել ներկայացնել համապատասխան զենք ձեռք բերելու թույլտվություն.
- զենք-զինամթերքի ոչնչացման նպատակով ներգրավվել ոչ պիտանի զենք-զինամթերքի ոչնչացման հանձնաժողովում:

Պարտականությունները.

- հսկել սպառազինության և տեխնիկայի հետ պատահարների կանխման ուղղությամբ միջոցառումների մշակման և իրականացման, դրանց պատճառների վերլուծման աշխատանքները, ինչպես նաև սպառազինության և տեխնիկայի նախապատրաստման ու շահագործման ժամանակ անվտանգության կանոնների պահպանման համար անցկացվող միջոցառումների իրականացման աշխատանքները.
- հսկել սպառազինության, ռազմական տեխնիկայի և նյութական այլ միջոցների պահպանման ու խնայողության, նորոգման և տարահանման աշխատանքները՝ ապահովելով դրանց մշտական սարքինությունը.
- հսկել սպառազինության, ռազմական տեխնիկայի ճիշտ շահագործման և դրանց պարբերաբար ստուգման աշխատանքները.
- հսկել պահակային և ներքին ծառայությունների կազմակերպման համար, անձնակազմի, ռազմական տեխնիկայի, սարքավորումների, սպառազինության, զինամթերքի և այլ գույքի հաշվառման աշխատանքները.
- հսկել ռազմական տեխնիկայի, սպառազինության պահպանության, սարքին վիճակում պահելու և ճիշտ օգտագործելու համար ձեռնարկվող աշխատանքները, ինչպես նաև պարբերաբար ստուգել դրանց առկայությունը և մարտական պատրաստությունը:
- հսկել սպառազինության ու ռազմական (հատուկ) նոր տեխնիկայի, կուատակման և պահուստների պահպանման աշխատանքներին.
- հսկել զենք-զինամթերքի կոմիսիոն վաճառքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.
- հսկել տեխնիկական միջոցների զորահավաքային նախապատրաստման աշխատանքներին.
- ուսումնասիրել ոչ պիտանի զենք-զինամթերքի ոչնչացման նպատակով համապատասխան հանձնաժողովի կողմից ստեղծված ոչնչացման ակտը:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ նյութատեխնիկական մատակարարման բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Ծրագրերի կառավարում
  - Բարեվարքություն
  - Խնդրի լուծում
  - Աշխատակազմի կառավարում
  - Որոշումների կայացում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատվիրակված լիազորությունների շրջանակներում մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: